Գագիկ Գուրգենի Բաղդասարյան

Ծնվել է 1964թ. փետրվարի 17-ին Երևանում։
1988 թվականին ավարտել է Ռյազանի բարձրագույն զինվորական ինժեներաավտոմոբիլային ուսումնարանը, մասնագիտությամբ՝ ինժեներ-մեխանիկ։ Տեխնիկական գիտությունների թեկնածու է։
Ծառայել է խորհրդային բանակում։
1989-1993թթ. աշխատել է Երևանի տեքստիլ գուլպա-նասկեղենի արտադրական միավորումում՝ որպես ինժեներ-մեխանիկ, 1993-1998թթ.՝ «Տաթև-Մ» կոոպերատիվի նախագահ, 1998-1999թթ.՝ Աջափնյակ թաղապետարանի կոմունալ բաժնի գլխավոր մասնագետ, 1999-2010թթ.՝ «Մարիամ» ՍՊԸ հիմնադիր տնօրեն։
2010թ. մայիսի 5-ին «Օրինաց երկիր» կուսակցությունից համամասնական ընտրակարգով ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր։
2013 թվականի հունիսից «Բարև Երևան» դաշինքի կազմում՝ Երևանի ավագանու անդամ։
Ամուսնացած է, ունի երեք երեխա։